

«ՄԵԹԱ»-Ի ԲԱՆԲԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԻԺԻ ԹԻՐԱՆ

Ռուսիոյ իշխանութիւնները երէկ հետապնդումի ենթակայ անձերու ցուցակին վրայ աւելցուցին համացանցի ընկերային հաղորդակցութեանց հսկայ՝ «Մեթա» ընկերութեան բանբեր Էնտի Սթոնի անունը: Մոսկուա պաշտօնապէս չհրապարակեց ամբաստանութիւնը, սակայն նշեալ ընկերութիւնը տարի մը առաջ Ներառուած էր Նաեւ ահաբեկչական կազմակերպութիւններու ցանկին մէջ:

ԳԵՐԻՆԵՐՈՒՄ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԵՒ ՓԽՐՈՒՆ ԶԻՆԱԴԱԴԱՐ

Կազայի մէջ յայտարարուած զինադադարը որոշ խախտումներով շարունակուեցաւ երէկ: Համաս շարժումը երեկոյեան յայտարարեց, որ Կարմիր խաչի միջազգային կոմիտէի ներկայացուցիչներուն յանձնած է արգելափակուած 13 իսրայէլցի, չորս թայլանտցի եւ ռուս քաղաքացի մը: Ըստ Համասի, վերջինս ազատ արձակուած է որպէս երախտագիտութիւն Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինի միջնորդական ջանքերուն: Վարչապետ Պենիամին

հու Կազայի մէջ ստացած է զինուորական զեկոյցներ եւ իրամանատարներուն հետ տեսակցութեան ընթացքին յստակեցուցած, որ գործողութիւնները պիտի շարունակուին զինադադարէն ետք, որովհետեւ կան երեք նպատակներ՝ «կործանել Համասը, ապահովել բոլոր գերիներուն ազատ արձակումը եւ չթոյլատրել, որ Կազան վերստին վտանգ սպառնայ Իսրայէլին»: Վարչապետը շեշտած է, որ պատերազմը պիտի շարունակեն մինչեւ նպատակներու իրագործում, վստահեցնելով, թէ անոր համար ունին բաւարար ուժ եւ վճռակամութիւն: Ներքինիու երէկ այդ մասին խօսած է Նաեւ Միացեալ Նահանգներու նախագահին հետ ու հաստատած, որ զինադադարի աւարտին իրենք պիտի շարունակեն ուժգին հարուածել Կազան: Այսուհանդերձ, իսրայէլեան լրատուամիջոցներ հաղորդեցին, թէ կառավարութիւնը Նաեւ կը քննարկէ զինադադարը երկարաձգելու առաջարկները: Իսրայէլի նախագահը այս առումով յայտնեց, թէ զինադադարը կրնան մէկ օր երկարաձգել իւրաքանչիւր 10 գերիի ազատ արձակումին դիմաց: Համաս միւս կողմէ միջնորդներուն տեղեկացուց, թէ պատրաստ է երկարաձգել զինադադարը:



Ներքինիախուի գրասենեակը հաստատեց, թէ նշեալ անձերը Եգիպտոսի վրայով հասած են Իսրայէլ ու այդ մասին տեղեկութիւն փոխանցուած է ընտանիքներուն: Այս խումբը մաս կը կազմէր Համասի եւ Իսրայէլի միջեւ կնքուած գերիներու փոխանակումի համաձայնութեան երրորդ փուլին, որուն ծիրին մէջ Իսրայէլ միւս կողմէ ազատ արձակեց 39 պաղեստինցի գերի: Փոխանակում տեղի ունեցած էր Նաեւ նախորդ երկու օրերուն: Միաժամանակ, երէկ շարունակուեցաւ Նաեւ մարդասիրական օգնութիւններու մուտքը Կազա: ՄԱԿ յայտարարեց, թէ սնունդ, ջուր,



Կազայի համեմատական հանդարտութեան գուգահեռ իրավիճակը վտանգաւոր էր Այսրյորդանանի ժընիւ գաղթականային մէջ, ուր երէկ Ներխուժեցին իսրայէլեան ուժերը եւ զինեալ բախումներ ունեցան պաղեստինցիներուն հետ՝ պատճառելով չորս պաղեստինցի զոհ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՍԱՅՄԱՆԻՆ ԿՐԱՅ

Իսրայէլի անվտանգութեան նախարարը այցելեց Լիբանանի հետ սահմանային գօտի՝ շարք մը զինուորական պատասխանատուներու ընկերակցութեամբ, արժեւորելու համար այդ ճակատին վրայ տիրող իրավիճակը: «Չէ-զոքացուցից Յրգպալլայի աւելի քան հարիւր անդամ եւ կործանեցիկ կուսակցութեան պատկանող քանի մը տասնեակ զինմթերանց ու թաքստոց», ըսաւ նախարար Եոազ Կալանթ, կարծիք յայտնելով, որ իսրայէլեան այս յաջողութիւններուն շնորհիւ կարելի պիտի ըլլայ Նոր մթնոլորտ մը ստեղծել սահմանային բնակավայրերուն մէջ եւ հնարաւորութիւն ընծայել բնակիչներու վերադարձին համար:

ՅԱՐՁԱԿՈՒՄ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՕՂԱԿԱՅԱՆԻՆ ԴԵՍ

Սուրիական լրատուամիջոցներ երէկ հաղորդեցին, որ Դամասկոսի միջազգային օդակայանը վերստին ենթարկուած է իսրայէլեան հրթիռային հարուածի, որուն պատճառով



ռով խափանուած են թռիչքները: Մարդկային իրաւունքներու սուրիական դիտարանը իր կարգին յայտարարեց, թէ օդակայանի աշխատանքը կարելի եղած է միայն քանի մը ժամով վերականգնել, որովհետեւ եղած է երկրորդ հարուած մը:

ՆԱԲԱՐԿՈՒԹԵԱՆ ԿՏԱՆԳ

Կազայի պատերազմի լոյսին տակ, Եմէի մերձակայ Ատանի ծոցին մէջ տակաւին առկայ են նաւարկութեան վտանգները: Երէկ այդ շրջանին մէջ «անձանթ» զինեալ-



ներու» կողմէ գրաւուեցաւ քարիւղարտար նաւ մը եւ: Շուտով հաղորդուեցաւ, թէ «Սենթըլ Փարք» քարիւղարտարը առնչուած է իսրայէլցիներու պատկանող «Չուիք Մերիթայմ լիմիթըդ» հետ, ուստի չէ բացառուած, որ գործողութիւնը կատարած ըլլան Եմէիին տիրող Հուսի զինեալները, թէեւ նշեալ ընկերութեան կեդրոնը կը գտնուի Լոնտոնի մէջ: Յիշեցնենք, որ Հուսիները շաբաթ մը առաջ գրաւած էին իսրայէլեան այլ ընկերութեան մը նաւը, սպառնալով թիրախաւորել այլ նաւեր եւս, որպէս հակադարձութիւն Կազայի դէմ իսրայէլեան գործողութիւններուն:

ՄԻՋԱԹ.

«ՀԱՐԱՄԻ ՀԱՐՅՈՎ ՏԱԿԱԻՆ ԵՐԱՇԽԻՔ ԳԿԱՅ»

Վարչապետի պաշտօնակատար Նաժիպ Միքաթի դիտել տուաւ, որ իրավիճակը անփոփոխ է Լիբանանի հարաւային սահմանին, սակայն չկան միջազգային երաշխիքներ: Թուրքիոյ մէջ տրուած հարցազրոյցի մը ընթացքին



քին Միքաթի ոճրային համարեց իսրայէլեան յարձակումները, աւելցնելով, որ Թել Աւիւ կ'անտեսէ միջազգային բոլոր սկզբունքներն ու մեկնաբանութիւնները: «Մենք պատերազմ չենք ուզեր եւ խաղաղութիւն կը պահանջենք, սակայն միաժամանակ չենք ընդունիր մեր հողի ոտնակոխումը», ըսաւ Միքաթի: Անոր խօսքով, Լիբանան կը զօրակցի պաղեստինեան դատին, բայց աշխատանք կը տարուի երկիրը գերծ պահել արիւնլալի ճակատամարտերէ:

Միքաթի Պոլսոյ մէջ տեսակցեցաւ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայյիպ Էրտողանի հետ՝ քննարկելու տարածաշրջանային իրավիճակը եւ Պելլուս-Անգարա յարաբերութիւնները: Միքաթի նշեց, որ Լիբանան բարեկամ պետութիւններէն կ'ակնկալէ ջանքեր՝ վերջ տալու Կազայի պատերազմին, որպէսզի ապահով եւ խաղաղ մնայ Լիբանանը եւս:

ԿԱՂԱՎՊԱՅՆԵՐԸ ԿՐԱԿՈՑԻ ԹԻՐԱՆ



Լիբանանի հարաւային շրջանին մէջ գործող Եուսիֆիլի խաղաղապահ ուժերու բանբեր Անտրեա Թեննեթի յայտարարեց, թէ խաղաղապահներու շրջուն ջոկատ մը սահմանային Այթարուն գիւղին մօտ ենթարկուած է իսրայէլեան կրակոցներու: «Ռեւէ խաղաղապահ չվիրաւորուեցաւ, սակայն վնասուեցաւ անոց ինքնաշարժը», ըսաւ բանբերը, նշելով, որ միջադէպը տեղի ունեցած է համեմատաբար հանդարտ ժամերու ընթացքին: Թեննեթի յիշեցուց

(Շաբ.ը տեսնել 2րդ էջ)

ՄԵՐՁԵՑՈՒՄ ԾՈՑԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Հայաստանի արտաքին գործերու նախարարութեան բանբեր Անի Պատալեան յայտարարեց, թէ Հայաստանն էւ Սեւուական Արաբիան դիւանագիտական յարաբերու-



թիւններու սզբնական շրջանին դեպքաններ պիտի չունենան Ռիատի ու Երեւանի մէջ: Ապիր կանաձայայ, յարաբերութիւններու զարգացումին եւ խորացումին համընթաց զոյգ մայրաքաղաքներուն մէջ կրնան հիմնարկէ դեպքանութիւններ: Յիշեցնենք, որ Հայաստանն ու Սեւուական Արաբիան 24 նոյեմբերին ստորագրած էին դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին արձանագրութիւն: Ստորագրութիւնը տեղի ունեցած էր Ապրիլ Տապիի մէջ՝ Եմիթիութիւններու մէջ Հայ եւ սեւուցի դեպքաններուն ձեռնարկ:

(Շաբ.ը տեսնել 2րդ էջ)



բժշկական օգնութիւն եւ անհրաժեշտ այլ պարագաներ կրող 61 բեռնակառք օժանդակութիւնը դատարկած է Կազայի հիւսիսային հատուածին մէջ:

Միացեալ Նահանգներու նախագահ Ծօ Պայտըն իր կարգին յայտարարեց, թէ Համաս ազատ արձակած է չորս տարեկան ամերիկացի երեխայ մը: Ան շնորհակալութիւն յայտնեց Զաթարի Թամին պըն Համաս ալ Սանի իշխանին՝ Տոհայի միջնորդական ջանքերուն համար ու ակնկալեց, որ զինադադարը վերկարածուի, իսկ գերիներու ազատ արձակումը՝ շարունակուի:

ՆՈՐ ՀԱՐՈՒՄՇԵՐՈՒ ԾՐԱԳԻՐ

Հակառակ զինադադարի դրութեան, Իսրայէլ կը շարունակէ մշակել ռազմական Նոր գործողութիւններու ծրագիրներ: Իսրայէլեան բանակը երէկ պաղեստինցիները վերըստին զգուշացուց Կազայի հարաւէն հիւսիսային հատուած



վերադառնալու վտանգներէն: Իսկ բանակի սպայակոյտի պետը երէկ վաւերացուց ժամանակաւոր զինադադարէն ետք Կազայի մէջ պատերազմը շարունակել Նոր ծրագիրները՝ հարաւային շրջանի զինուորական ղեկավարութեան հետ կատարուած քննարկումներու եւ ապահովական արժեւորումներու լոյսին տակ:

Իսկ Իսրայէլի վարչապետ Պենիամին Ներքինիախու օգտուեցաւ զինադադարէն ու ժամանեց Կազայի ճակատ,



ուր տեսակցեցաւ իրամանատարներու եւ զինուորներու հետ, Նաեւ ստուգեց շրջանին մէջ բացայայտուած Համասի գետնափոր ուղիներէն մէկը: Իր գրասենեակէն հրապարակուած յայտարարութեան համաձայն, Ներքինիա-

ՀԱՊԿ-Ի ՈՒՇԱՅԱԾ ՔԱՅԼԸ

Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութիւնը հիմնադրուած է 1992 թուականին Նախկին՝ Խորհրդային Միութեան վեց հանրապետութիւններու՝ Հայաստանի, Ռուսաստանի, Պելառուսի, Ղազախստան, Ղրղստան եւ Տաճիկստանի մասնակցութեամբ: Կազմակերպութեան կանոնադրութեամբ, որպէս գլխաւոր նպատակը դրուած է անդամ երկիրներու տարածքային ամբողջականութեան եւ ինքնավարութեան ապահովում՝ Հաւաքական պաշտպանութեան հիման վրայ:

2022-ին, երբ Ատրպէյճան ներխուժեց Հայաստանի ինքնիշխան տարածք, Երեւան օգնութեան համար դիմեց ՀԱՊԿ-ին, սակայն հիմնականին մէջ Ռուսաստանի կողմէ ղեկավարուող այդ կազմակերպութիւնը մերժեց ընդառաջել Հայաստանի խնդրանքին՝ պատճառաբանելով թէ Հայաստան-Ատրպէյճան սահմանը տակաւին ճշգրտուած չէ: Երկու ամիս ետք՝ Նոյեմբերին Երեւանի մէջ կայացաւ ՀԱՊԿ գագաթի ժողովը, որուն ընթացքին վարչապետ Փաշինեան պահանջեց, որպէսզի Կազմակերպութիւնը յստակ դիրքորոշում արտայայտէ Ատրպէյճանի կողմէ Հայաստանի դէմ յարձակումներուն եւ հնչող սպառնալիքներուն կապակցութեամբ: Սակայն, ժողովին ներկայ նախագահները մերժեցին ընդառաջել այդ դիմումին եւս: Այդ օրէն ի վեր Հայաստան-ՀԱՊԿ յարաբերութիւնները սկսան գահավիժի՝ մօտենալով ամբողջական խզումի եզրին:

Վերջին ամիսներուն Հայաստան մերժեց մասնակցիլ ՀԱՊԿ-ի տարբեր մակարդակներու հանդիպումներուն՝ հասնելով հոն, որ վարչապետ Նիկոլ Փաշինեան Պելառուսի նախագահ Ալեքսանտր Լուկաշենքոյին տեղեկացուց, որ պիտի չկարողանայ մասնակցիլ օրերս Մինսքի մէջ տեղի ունեցող ՀԱՊԿ-ի հերթական գագաթի ժողովին: Երեւան նաեւ պահանջեց, որպէսզի օրակարգէն հանուի Հայաստանին օգնութիւն տրամադրելու հարցը: Այդուհանդերձ, Կազմակերպութեան քարտուղարութիւնը եկաւ յայտարարելու որ, պիտի շարունակեն քննարկել Հայաստան դիտորդներ ուղարկելու աշխատանքները:

Սեպտեմբերեան պատերազմէն առին շատ ջուր անցաւ կամուրջին տակէն: Հայաստան ժամանեց Եւրոպական դիտորդական առաքելութիւնը, բանակը սկսաւ զինել այլ երկիրներու արտադրութեան զինատեսակներով ու հրաժարիլ ռուսական ռազմական սկզբունքներէն, Արցախը հայաթափուեցաւ Ռուս խաղաղապահներու անգործութեան ու լուս մեղակցութեան պատճառաւ: Ներկայիս Եւրոպայի ու Միացեալ Նահանգները Հայաստանի հողային ամբողջականութիւնը եւ սահմաններու անձեռնմխելիութիւնը դարձուցած կարմիր գիծ՝ զգուշացնելով Պաշտպան իր չմտածուած քայլերու հետեւանքներուն մասին:

Այսօր, Հայաստան-Ռուսաստան յարաբերութիւնները կը գտնուին ճգնաժամի առջեւ: Որքան որ ալ Մոսկուան մեղադրէ Արեւմուտքին, որ ան կը փորձէ սեպ խրել երկու երկիրներու բարեկամութեան մէջ, ներկայ իրավիճակի գլխաւոր պատասխանատուն Զերմինի ղեկավարութիւնն է, որ 44-օրեայ պատերազմէն առին դատապարտումի ոչ մէկ խօսք ըսած է եւ ոչ ալ զօրակցութիւն յայտնած է իր դաշնակիցին՝ ի տես Պաշտպան յարձակումներուն եւ ռազմատենչ յայտարարութիւններուն:

Վերջերս, Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Զախարովան կը յայտարարէր որ, 44-օրեայ պատերազմի ասարտին ստորագրուած եռակողմ յայտարարութեան հիման վրայ Նախիջեանը Ատրպէյճանին կապով ճանապարհը կամ յայսպէս կոչուած «Չանգեզուրի միջանցքը», պէտք է հսկեն Ռուսաստանի սահմանապահ ուժերը: Տարօրինակ է այս մօտեցումը երբ նկատի ունենանք որ, այդ եռակողմ յայտարարութեան բոլոր կետերը խախտուած են Ատրպէյճանի եւ Ռուսաստանի կողմէ եւ այժմ կեդրոնացած են մէկ կետի վրայ, որուն ժամանակին համաձայնած է Հայկական կողմ: Ներկայիս այդ եռակողմ համաձայնութիւնը դադրած է գոյութիւն ունենալէ եւ դարձած է մեռած փաստաթուղթ: Լաչինի միջանցքը ապահովել չկարողացող այժմ կ'ակնկալէ որ, «միջանցքը» յանձնուի իրեն:

Ժամանակին Նոյն Պելառուսի նախագահը յայտարարեց ըսելով՝ «Նիկոլը երթալիք տեղ չունի» ակնարկելով Ռուսաստան-Պելառուս միութեան կապակցութեան Հայաստանի միանալու մասին: Ժամանակը եկաւ ցոյց տալու որ, Հայաստան գտած է իր երթալիք տեղը եւ դիմացիները մտածելու շատ բան ունին: Հայաստան կ'երթայ իր որդեգրած ժողովրդավարական արժեքամակարդի ուղղութեամբ, հեռանալով միապետական վարչակարգէրէն: Հետեւաբար, ՀԱՊԿ-ի եւ Ռուսաստանի քայլերը ոչ միայն ուշացած են, այլեւ դարձած են իմաստագուրկ:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»

ՊԵՌՊՐԱՆԻ ԱՏՐՊԵՅԱՆԸ ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՐ ԵՐԵՔ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՒ ՇՈՒՐԳ ԽՆԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏՏ՝ ՓԱՇԻՆԵԱՆ

Դեռ պարզ չէ՝ Ատրպէյճանը, ի վերջոյ, կը վերահաստատուէ՝ երեք սկզբունքներու շուրջ խաղաղութեան պայմանագիր կնքել Հայաստանի հետ, ուրիշ եթերով, պատասխանելով խաղաղութեան գործընթացին վերաբերեալ քաղաքացիներէն մէկուն հարցումին, յայտնեց վարչապետ Նիկոլ Փաշինեան:



Վարչապետը յիշեցուց՝ այդ սկզբունքները համաձայնեցուած են բանակցութիւններու ընթացքին եւ այդ համաձայնեցումը արտայայտուած է Մայիս 14-ին եւ Յուլիս 15-ին եռակողմ հանդիպումներու արդիւնքներով:

Փաշինեան նաեւ սկզբունքները յիշեցուց՝ Հայաստանն ու Ատրպէյճանը կը ճանաչեն միմեանց տարածքային ամբողջականութիւնը, սահմանազատման գործընթացի քաղաքական հենքը Այմարի հռչակագիրն է, տարածաշրջանային կայունութիւնը պէտք է բացուի երկիրներու իրաւագործութիւնը, ինքնիշխանութիւնը յարգելով՝ փոխադրութեան եւ հաւասարութեան սկզբունքի հիման վրայ:

«Հիմա, չենք կարող վստահաբար պնդել, որ Ատրպէյճանը հրաժարուած է այդ երեք սկզբունքների հիման վրայ խաղաղութեան պայմանագիր կնքել, բայց նաեւ չենք կարող վստահ ասել, որ Ատրպէյճանը վերահաստատում է իր հաւատարմութիւնն այդ երեք սկզբունքներին: Անհրաժեշտութիւն կայ բանակցութիւնների ընթացքում այս հարցերէն կը քննարկուին, ըսաւ Փաշինեան:

Գործադիրի ղեկավարը եւս հաստատեց, որ Նոյեմբեր 30-ին քարտէզներու եւ սահմաններու մասով նախատեսուած է սահմանագծման յանձնաժողովներու հանդիպում:

Փաշինեան ըսաւ, որ այդ քննարկումներէն Երեւանը հետեւութիւններ պիտի ընէ՝ արդեօք Ատրպէյճանը պատրաստ է այդ սկզբունքներու հիման վրայ երթալ խաղաղութեան, թէ՛ Ատրպէյճանը կը հրաժարի այդ սկզբունքներէն:

«Մինչեւ այսօր մենք այդ վստահութիւնը չունենք», ընդգծեց վարչապետը:

Հայաստանի ամենամեծ խնդիրներէն մէկը շրջափակումն է, որ կը շարունակուի արդէն 30 տարիէ, նաեւ յայտնեց վարչապետը՝ յոյս յայտնելով, որ խաղաղութեամբ եւ «խաղաղութեան խաչմերուկ»ով պիտի յաղթահարեն զայն:

«Մենք ի՛նչ կը կարծենք, Մեղրիով պէ՛տք է անցնի երկաթուղի, որը կը կապի արեւելքը-արեւմուտքին, այդ խնդրով՝ Ատրպէյճանը Նախիջեանին, Թուրքիային, այդ թուով՝ Մեղրին Երասխին եւ Հայաստանի մնացած մասին, այդ թուով՝ Հայաստանը միջազգային երկաթուղային ցանցին, այդ, միանշանակ, եւ դա 100 տոկոս համապատասխանում է մեր երկրի շահերին», ըսաւ Փաշինեան:

Ընդգծելով, որ կապուղիները պէտք է բացուին երկիրներու ինքնիշխանութեան իրաւագործութեան ներքոյ՝ հաւասարութեան եւ փոխադրութեան սկզբունքներով՝ գործադիրի ղեկավարը նշեց, որ Ատրպէյճանը կրնայ օգտուիլ մեր երկաթուղիէն Նախիջեանի կապի համար, այն Նոյն սկզբունքով, որ Հայաստանը կրնայ օգտուիլ, օրինակ, Մեղրիի եւ Երասխի երկաթուղային կապի համար:

Փաշինեան նշեց, որ կ'ուզեն բանալ նաեւ արեւելքը արեւմուտքին միացնող ճանապարհները:

Վճարումներու դիմաց Ռուսաստանի կողմէ սպառազինութիւն եւ սարքաւորում չմատակարարելու խնդիրը կայ, քաղաքացիներէն մէկուն հարցումին, թէ ինչու՞ չեն իրականացնել «Գոյք պարտքի դիմաց» համաձայնագրի ձեւաչափը՝ հակառակ ուղղութեամբ, իսկ մնացածին համար չեն դիմեր Միջազգային Տնտեսական Դատարան, տեղեկացուց վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ նշելով նաեւ, որ քննարկումներ կ'ընթանան որոշելու, թէ ինչ մեխանիզմով այդ խնդիրը լուծել:

«Կարող է լինել վճարուած գումարների չափով, օրինակ, պատասխանի Հայաստանի Հանրապետութեան ունեցած պարտքից նուազեցումը, որը տարբերակներից մէկն է՝ միակ տարբերակը չէ, բայց էստեղ էլ Ռուսաստանը սպառազինութիւնների կարիք ունի, եւ մենք տրամադրուած ենք աշխատանքային, եւ այդ քննարկումները, յոյս ունեն, կը բերեն յստակ արդիւնքներ, ըսաւ վարչապետը:

2001 թուականին, երբ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինը պաշտօնական այցով առաջին անգամ ժամանեց Հայաստան, Փութինն ու այդ ժամանակ Հայաստանի նախագահ Ռոպերթ Զոչարեանը քննարկեցին Ռուսաստանին Հայաստանի ունեցած 114 միլիոն տոլարի պարտքը մարելու խնդիրը: Մասնաւորապէս, պարտքի դիմաց Ռուսաստանին առաջարկուեցան հայաստանեան շարք մը ձեռնարկութիւններ, եւ մէկ տարի անց Հայաստանը 100 միլիոն տոլարի պարտքի դիմաց Ռուսաստանին փոխանցեց ինկզ մեծ ձեռնարկութիւն:

«Ձեր ասած պողպատէ մուրճը չի գործում», ըսաւ քաղաքացիներից մէկը՝ հետաքրքրուելով վարչապետէն, թէ երբ քրեական գործերով անցնող Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Զոչարեանը, երրորդ նախագահ Սերժ Սարգսեանը, ԲՀԳ ղեկավար Գագիկ Ծառուկեանը, ԱԺ նախկին նախագահ Յովիկ Աբրահամեանը պատասխանատուութիւն պիտի կրեն:

Փաշինեան պատասխանեց՝ յեղափոխութենէն յետոյ կար հնարաւորութիւն իրապարակին վրայ հաւաքուած ժողովուրդով երթալ եւ իրականացնել ժողովուրդին պատկերացուած արդարադատութիւնը:

«Դա գուցէ կը լինէր սրտի հովանք, բայց կարծում եմ, որ այդ պարագայում մենք այսօր շատ անելի մեծ խնդիրներ կ'ունենայինք եւ երկրում պետական հիմնարկների ջախջախուած փաստի առաջ կը կանգնէինք», ըսաւ վարչապետը՝ շեշտելով, որ արդարութիւնը պէտք է ըլլայ հաստատութեան:

«ՀԱՐԱԻ ՀԱՐՅՈՎ ՏԱԿԱԻՆ ԵՐԱՇԽԻՔ ԶԿԱՅ»

(Ծարուակուած Ա. Էջէն)

Եունիֆիլի կոչը հակամարտողներուն, ուր կը պահանջուի վերջ տալ հռթիրակոծումի եւ հրաձգութեան փոխանակումին՝ կանխելու համար իրավիճակի անակնկալ կտրուկ վատթարացումը:

ԼԸ ՏՐԻԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Կը կարծուի, որ Լիբանանի հարցով Ֆրանսայի նախագահի յատուկ պատիրակ, արտաքին գործերու նախկին նախարար Ժան Իվ Լը Տրիան Լիբանան պիտի ժամանէ



Զորքէջարքի օր՝ շարունակելու համար Հանրապետութեան Նոր նախագահի ընտրութեան վերաբերող իր ջանքերը, զորս ի գործ դրած էր 2022-ի Նոյեմբերէն ի վեր: Նշենք, որ Նոր պաշտօնին նշանակուելէ ետք Լը Տրիան Լիբանան այցելած էր քանի մը առիթով՝ տեսակցելու պետական պաշտօնատարներու եւ քաղաքական ուժերու ղեկավարներուն հետ, սակայն ապարդիւն:

ՈՒՅԻ ԶԵՐԹԱԿԱՆ ԲՈՂՈՔ

Մարոնիներու պատիրարք Պըշարա Ռահի կարդինալը իր կիրակնօրեայ քարոզին մէջ անգամ մը եւ քննադատեց



Լիբանանցի քաղաքական գործիչներուն անպատասխանատու վերաբերմունքն ու քաղաքական անհոգութիւնը: Ան դատապարտեց լիբանանցի երիտասարդները արտագաղթի մղող քաղաքականութիւնները, կոչ ուղղելով վերջ տալ Սահմանադրութիւնը խախտելու երեւոյթին ու անյապաղ ընտրել Հանրապետութեան Նոր նախագահը, նկատի առնելով տարածաշրջանի փոթորկուտ իմճակն ու Լիբանանի դէմ ցցուած մարտահրաւերները:

ՄԵՐՁԵՑՈՒՄ ԾՈՅԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՀԵՏ

(Ծարուակուած Ա. Էջէն)

Իսկ Հայաստանի Ազգային ժողովի նախագահի տեղակալ Յակոբ Արշակեան ելոյթ ունեցաւ Արաբական Միացեալ Եմիրութիւններու կազմաւորումի 52-ամեակին առթիւ: Ան համացանցային գրառումով մը յայտնեց, թէ մեծագոյն ոգեւորութեամբ կը հետեւի շարք մը ոլորտներու մէջ անցնող տարիներուն Եմիրութիւններու գրանցած յաջողութիւններուն եւ ուրախութեամբ կը սպասէ բարեկամ երկրին կողմէ Նոր դարձուցնելու նուաճումին: «Վերջին տարիներուն զգալիօրէն աճած է Հայաստանէն Եմիրութիւններ եւ հակառակ ուղղութեամբ բարձրաստիճան այցելութիւններու թիւը, կը գրանցուին նաեւ գործարար հանդիպումներ, համաժողովներ եւ ցուցահանդէսներ, առկայ է կառուցողական համագործակցութիւն», նշեց Արշակեան, բարեկան երկիրը համարելով տարածաշրջանին մէջ Հայաստանի առաջին առեւտրային գործընկերը, յիշեցնելով, թէ երկկողմանի կանոնաւոր թռիչքներուն թիւը կը հասնի շաբաթական 30-ի: «Ուրախութեամբ կ'ուզեմ արձանագրել, որ Հայաստանի քաղաքացիներուն համար Եմիրութիւններ մուտքի արտօնագրի չեղարկումին արձանագրութիւնը վաւերացումի փուլի մէջ է եւ շատ մօտ ապագային պիտի մտնէ ուժի մէջ», յայտարարեց Ազգային ժողովի փոխնախագահը:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԱՄՈՐԻ ՄԵՆԱՇՆՈՐԳ

Ռուսիոյ նախագահութեան բանբեր Տմիթրի Փետրով յայտարարեց, որ ցարդ միայն Մոսկուան ի վիճակի է խա-



ղաղութեան երաշխաւորի դեր խաղալ Հարաւային Կովկասի մէջ: Ան շարք մը երկիրներ ամբաստանեց տարածաշրջանի իրավիճակը ապակայունացնել եւ Ռուսիան շրջանէն դուրս մղել փորձելու մէջ: Ռուս բանբերը յոյս յայտնեց, որ Հայաստան կը վերսկսի լիարժեք մասնակցիլ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան գործունեութեանը: Այս առումով, Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերկէյ Շոյկու յայտնեց, թէ ՀԱՊԿ-ի անդամ երկիրներու հետ որոշուած է հիմնել հակաօդային պաշտպանութեան միասնական համակարգ մը:

www.araraddaily.com

BOGHOS OPTIC
Autoroute Jdeideh,
Tel.: 01-870016

«Արարատ» օրաթերթը կը ներկայացնէ «Մետիամաքս»-ի «Գիտամարդ» շարքը այն մարդկոց մասին, որոնք հասկցած են, որ իրենց կոչումը հետազոտող ըլլալն է եւ, չնայած բազմաթիւ դժուարութիւններուն, որոշած են ներուժն ու ժամանակը ներդնել գիտութեան մէջ: Ինչո՞վ կը զբաղի գիտնականը, ո՞րն է անոր առօրեայ գործունեութիւնը եւ որո՞նք են գիտութեամբ զբաղելու մղումները: Նախագիծին նպատակն է բարձրաձայնել գիտութեան յառաջընթացին եւ յաջողութիւններուն, գիտութիւն-հասարակութիւն-սոսնտութիւն կապի կարելորդութեան մասին:

« Գ Ի Տ Ա Մ Ա Ր Դ »

ՅՈՎԻԿ ՓԱՆՈՍԵԱՆ. ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՉԻՍ ԴԱՐՁՈՒՑԱԾ Է ԻՐ ՉԻՆՈՒՐԸ

Կենսաբանութիւնը գիտութիւն է, որ կը փորձէ բացայայտել կենսի առեղծուածը: Այդ առեղծուածի բացայայտմամբ տարուած ԵՊՀ Կենսաբանութեան բաժանմունքի մանրէաբանութեան, մանրէներու եւ բոյսերի կենսաարհեստագիտութեան ամպիոնի դասախօս Յովիկ Փանոսեան ընտրած էր իր մասնագիտութիւնը:

Գիտութեան զինուորը
«Ակնթարթի պէս անցած իմ կենսիս լաւագոյն հիւսն ուսանողական տարիները քայլ առ քայլ իմ առջեւ բացին գիտութեան դռները ու զիս դէմ-յանդիման կանգնեցուցին ընտրութեան առջեւ: Սակայն նոյնիսկ չհասցուցի երկմտիլ, խորհել, կենսաբանութիւնը զիս կլանած էր արդէն ու



դարձուցած իր զինուորը: Չեմ գիտեր ինչքանով հիմնադրուած է, բայց կարծիք կայ, որ մասնագիտութիւնը մարդու մէջ կը կերտէ Ե որակներ: Իմ սեփական փորձով կրնամ փաստել, որ, այո՛, կենսաբանութիւնը իմ մարդկային հոգեկերտուածքին մէջ որակներ խմբագրած է: Կենսաբանութեան ամենաբազմազան արժէքն է եւ, հետեւաբար, մասնագետը, որուն առաքելութիւնը կենսի ուսումնասիրութիւնն է՝ իր բոլոր դրսեւորումներով, պարտաւոր է ըլլալ առնուազն նրբանկատ ու շատ զգոյշ», կ'ըսէ ան:

«Կենսաբանութիւնը ընտրեց զիս»
Պատանութեան տարիներուն հրապուրուած էր բնագիտութեամբ, բայց երբեւէ չէր պատկերացներ, որ կը դառնայ այս մասնագիտութեան կրողը:

Յովիկը, դարձող ասարտելէն յետոյ, ոչ-այնքան վստահ իր կարողութիւններուն, կը դիմէ Երեւանի պետական բժշկական համալսարան, բայց կը ձախողի: Այս ձախողումը յամառ բնաւորութեամբ ապագայ գիտնականին չի հիասթափեցներ:

«Ուժերու ամբողջ լարումով սկսայ նախապատրաստուիլ յաջորդ տարուան քննութիւններուն: Տարիներու հեռուէն պիտի հասկնայի, թէ ինչ ճակատագրական պիտի ըլլար դիմումի վերջին տողը կենսաբանութիւն մասնագիտութիւնը նշելու հանգամանքը: Նոյնիսկ չէի գիտեր այդ մասնագիտութեան մասին ու պարզապէս նշեցի՝ վերջին տողը դատարկ չթողելու համար: Հիմա կրնամ հաստատապէս ըսել, որ ոչ թէ ես ընտրեցի իմ մասնագիտութիւնս, այլ ճակատագրորէն այդ ինձի տրուեցաւ, կամ ալ կենսաբանութիւնը ընտրեց զիս: Յետոյ պիտի գային տարիներ, դէպքեր, մարդիկ, որոնք դանդաղ ու մանրակրկիտ պիտի իմ մէջ կերտին կենսաբան մասնագետը», կը պատմէ ան:

Ծայրայեղ պայմաններու մէջ ապրող մանրէները
Խումբը, որուն հետ կ'աշխատէր Յովիկ Փանոսեանը, կը զբաղէր Էքսթրեմոֆիլ մանրէներու ուսումնասիրութեամբ: Անոնք այն մանրէներն են, որոնք կ'ապրին ֆիզիքական, քիմիական կամ բնաքիմիական ցուցանիշներու ծայրայեղ արժէքներու պայմաններու մէջ, ուր այլ օրկանիզներու գոյատեւումը գրեթէ անհնար է:

«Որեւէ բնաքիմիական ցուցանիշ բնութեան մէջ կը դրսեւորուի արժէքներու լայն տիրոջով: Երբ այդ ցուցանիշները կը դրսեւորուին իրենց ծայրայեղ արժէքներով, ապա այդ պայմաններու մէջ կը յայտնուին, այսպէս կոչուած, ծայրայեղասեր կամ Էքսթրեմոֆիլ մանրէներ, որոնք ուսումնասիրութեամբ կը զբաղէինք մենք: Օրինակ՝ բնութեան մէջ կան այնպիսի բնապահպանական համակարգեր, որոնք մէջ շերմաստիճանային պայմանները նպաստաւոր չեն կենդանի օրկանիզներու ոչ գոյատեւման, ոչ բազմացման համար: Ձերմաստիճանային գործօնի շատ բարձր եւ շատ ցած արժէքներու մէջ կենդանի օրկանիզներու գոյատեւման հնարաւորութիւնը նաւագագոյնի կը հասնի, կամ նոյնիսկ հնարաւոր չէ, բայց կան մանրէներ, որոնք այդպիսի պայմաններու մէջ ոչ միայն կրնան գոյատեւել, այլեւ՝ բազմանալ: Եւ այդ բնապահպանական համակարգերը միայն այդպիսի մանրէներով համարուած են: Նոյն կերպ կրնանք քննարկել աղային գործօնը: Աղը կենցաղի մէջ կը կիրառուի նաեւ որպէս մանրէազերծիչ միջոց. աղի բարձր խտացման պայմաններուն մէջ գրեթէ որեւէ կենդանի օրկանիզ չի կրնար ապրիլ: Բայց կան մանրէներ, որոնք կրնան աղի գերազանցած լուծոյթի մէջ գոյատեւել: Ես նշեցի միայն շերմաստիճանային եւ աղային գործօնները, բայց այդ կարելի է դիտարկել որեւէ այլ գործօնի օրինակով», կ'ըսէ գիտնականը:

Հայաստանի մէջ կան նման պայմաններով բնապահպանական համակարգեր, օրինակ՝ երկրաշերտային աղբիւրները, որոնք միջրոպիոթան ներկայացուած է շերմասեր մանրէներով: Այս մանրէներու կենսաբազմազանութիւնը ոչ միայն հետաքրքրական է նոր տեսակներու յայտնաբերման, անոնց յարմարողականութեան մեխանիզմներու պարզաբանման եւ կենսի ծագման առեղծուածի վերծանման առումով, այլեւ կարելոր տեղեկութիւն կու տայ երկրի ընդերքին մէջ տեղի ունեցող գործընթացներու մասին:

Ուսումնասիրութիւններ՝ Սեւանայ լիճին մէջ
Նաեւ Աւանի աղի հանքի եւ Սեւանայ լիճի մանրէները ուսումնասիրուած են:

«Սեւանայ լիճի մանրէային, նկատի ունիմ փոքրաքիթային կենսաբազմազանութիւնը բաւարար ուսումնասիրուած չէ: Ցաւօք, Սեւանայ լիճի մանրէային կենսաբազմազանութեան ուսումնասիրութիւնը շատ բարդ ու թանկարժէք է: Բաւական շատ ենթակառուցուածքներ, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ կը պահանջուին, որպէսզի Սեւանայ լիճի մանրէաբանական հետազոտութիւնները ըլլան համակարգուած ու համալիր: Մասնաւորապէս, տեխնիկական սուղ հնարաւորութիւնները թոյլ չեն տար նմուշահանում իրականացնել լիճի յատկային նստուածքներէն», կ'ըսէ կենսաբանը:



Յովիկ Փանոսեանը համոզուած է, որ Սեւանը հետաքրքրական կենսաբազմազանութիւն կ'աւարտէ իր մէջ՝ որպէս բարձրադիր լիճ, քաղցրահամ ջուրի աղբիւր, ծայրայեղական ապրելավայր: Այն շերմաստիճանային գործօնի բացասական շեղմամբ կենսամիջավայր է, որուն յարմարուած մանրէներն ալ կ'ունենան իրենց մենայատուկ առանձնայատկութիւնները:

«Բացի անկէ, Սեւանի մանրէաբանութեան ուսումնասիրութիւնը առանցքային նշանակութիւն ունի բնապահպանական տեսանկիւնէն՝ ջրային բնապահպանական համակարգի սնուցողական մակարդակը գնահատելու համար: Այդ յատկապէս կը կարելորուի Սեւանի լիճի ջուրի մակարդակի տատանումներու պայմաններուն մէջ բնապահպանական հաւասարակշռութեան վերականգնման համար համալիր միջոցառումները մշակելու ատեն»:



Հակապիոթիքներու չվերահսկվող կիրառումը, ինչպէս կը բացատրէ գիտնականը, բերած է այնպիսի վիճակի մը, որ բազմաթիւ ախտածին մանրէներ անոնց նկատմամբ կայունութիւն ձեռք բերած են: Եթէ նախապէս հակապիոթիքներու կիրառումը արդիւնաւետ էր այս կամ այն հիւանդութեան յարուցիչի դէմ պայքարելու համար, ապա այսօր այդ նոյն հակապիոթիքը կրնայ օգտուանէ ըլլալ: Այս երեսուցի մանրէներու եղափոխութեան հետ կապուած է եւ պայմանաւորուած է որոշակի յատկանիշներու ձեռքբերումով, որոնք զանոնք կը դարձնեն աւելի կայուն հակապիոթիքներու նկատմամբ:

«Մեր խնդիրն էր հետազոտել եւ պարզել ջրային բնապահպանական համակարգերուն մէջ, այդ շարքին՝ Սեւանայ լիճին մէջ նման ծիններ կրող մանրէներու առկայութիւնը: Մեր ուսումնասիրութիւններուն մէջ մանրէներու թիրախային խումբը աղիքային խումբի մանրէներն են, որոնք կրնան աղիքային տարբեր վարակներու յարուցող մանրէներուն փոխանցել այդ տեղեկութիւնը: Մեր խնդիրն

էր նաեւ պարզել, թէ ինչ ճանապարհներով կրնայ փոխանցուիլ այդ տեղեկութիւնը, ինչքանով կրնան բնական միջավայրի մէջ ապրող, հակապիոթիքներու նկատմամբ կայունութիւն ունեցող այդ ծինները Սեւանայ լիճի մանրէներէն տեղափոխուիլ ախտածին մանրէներուն», կը պատմէ ան:

Գիտութեան ոլորտի խնդիրներուն համակարգային լուծում է պետք

Խնդիրները, որոնք կան գիտութեան ոլորտին մէջ, ինչպէս կը նկատուի գիտնականը, միայն Հայաստանի մէջ առկա չեն. պարզապէս այդ խնդիրները մեր մօտ աւելի սուր կը դրուին:

«Եւ այդ ողջունելի է, այդ կը փաստէ, որ կրթութեան ու գիտութեան արժէքը գնահատող հայ հասարակութիւնը անտարբեր չէ գիտութեան խնդիրներուն նկատմամբ: Գիտութեան՝ որպէս ազգային մարտավարութեան ընկալումը մեր մօտ դեռ իր ձեւաւորման կամ աւելի շատ՝ վերածեալերպման փուլին մէջ է: Մենք աւելի շատ կը խօսինք, հիմնաւորուած կամ ենթադրական կարծիքներ կը յայտնենք, կ'առաջարկենք լուծումներ, սակայն սա այն հարթակն է, ուր պատրաստի դեղատոմսեր սովորաբար չեն ըլլար: Գիտութեան խնդիրները անձի կամ անհատի տեսանկիւնով չի լուծուիր, համակարգային մօտեցում պետք է: Ընելիքները շատ են, ու անոնք կ'ենթադրեն անընդհատ ու անդու աշխատանք: Նուազագոյնը, որ կը պահանջուի մեզմէ այսօր, իւրաքանչիւրս մեր տեղը ու մեր գործով անմնացորդ աշխատիլն է: Սյդ դանդաղ, բայց հաստատուն յաջողութեան գիւղականն է», կ'ըսէ ան:

Յովիկ Փանոսեան կը կարծէ, որ պետք է սորվիլ նաեւ գիտութեամբ զբաղելու խնդիրները չպայմանաւորել միայն պետութեան հոգածութեամբ: Ան չի փստեր, որ կայ այդ խնդիրն ու գիտութեան պատասխանատուները միշտ հետեւողական պիտի ըլլան պետութեան ուշադրութեան կիզակետին պահելու ոլորտը: Բայց, ինչպէս կը Նշէ ան, անհրաժեշտ է վերանայիլ այսօր մեր մէջ գերակշռող կարծրատիպերը, գիտութեան յառաջընթացը միայն անով պայմանաւորելը:



«Մենք վերջին տասնամեակներուն յայտնուած ենք բոլորովին այլ իրավիճակի մէջ, հետեւաբար՝ լուծումներն ալ պիտի ըլլան թելադրուած այդ իրավիճակէն: Երկարատեւ ընդմիջումէ յետոյ ձեւաւորման նոր փուլի մէջ է գիտութեամբ զբաղող մարդոց սերնդափոխութիւնը, որ անցնցում ու դանդաղ մեզ պիտի դուրս բերէ ժամանակի հրամայականները պատուով ընդունող ու, ինչու չէ, այդ խնդիրները յաղթահարող նոր մակարդակի վրայ: Ես կ'ուզեմ հաւատալ անոր»:

Գիտութիւնը նուիրեալներու շնորհիւ կը կերտուի

Յովիկ Փանոսեանը կը նկատէ, որ կրթութիւնը հնարաւոր չէ տարանջատել գիտութենէն, եւ անոնք փոխապայմանաւորող, իրարմէ ածանցող ոլորտներ են.

«Գիտութեան կարելորագոյն առաքելութիւնն է գիտելիքի, փորձի փոխանցումը սերունդներուն, որ մենք կը կոչենք կրթութիւն: Հետեւաբար, խնդիրները, որոնք կան գիտութեան ոլորտին մէջ, անմիջականօրէն կ'ազդեն նաեւ կրթութեան վրայ: Մեր օրերուն քիչ են ուսանողներ, որոնք կ'ընտրեն գիտութեան բարդ ու ֆինանսապէս ոչ-այնքան ապահով զբաղմունքը: Բայց, բարեբախտաբար, կան նուիրեալներ: Այսօր նոյն ինքն այդպիսի նուիրեալներու շնորհիւ կը կերտուի գիտութիւնը: Եւ այդ միշտ ալ այդպէս եղած է: Ինչ կը վերաբերի աշակերտներու պակաս հետաքրքրուածութեան բնագիտութեան նկատմամբ, մասնագիտութեան բերումով ես շատ կը ճամբորդեմ եւ փոքրիշատէ հաղորդ եմ արտասահմանի մէջ բնագիտութեան նկատմամբ աշակերտներու կամ ուսանողներու խթանման խնդիրներուն: Պատկերը գրեթէ նոյնն է: Թող մեծամտութիւն չթուի, բայց գիտութեամբ զբաղիլը ոչ-բոլորին տրուած է: Այդ է հիմնական պատճառը: Ի հարկէ, կան յայտնի դասական մօտեցումներ մանկավարժութեան մէջ, որոնք պիտի խթանեն, հետաքրքրութիւն յառաջացնեն աշակերտներու շրջանակին մէջ, բայց, այնուամենայնիւ, գիտութեամբ զբաղիլը ոչ այնքան ընտրութիւն է, որքան կանխորոշուած առաքելութիւն»:



ԱՇԽԱՐՀԻ ՄԻՆՉԵՒ 17 ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱԿԻ
1/4-ՐԴ ՄԱՐՏԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ, ԱՐԺԱՆԹԻՆ,
ՖՐԱՆՍԱԿ ԵՒ ՄԱԼԻ ԴԵՊԻ
ԿԻՍԱԿԱՐՏԱԿԱՆ

Իստոնեզիոյ ֆուտբոլի մարզադաշտերուն վրայ շարունակուեցան մինչեւ 17 տարեկան տղոց Աշխարհի ֆուտբոլի բաժակի մրցումները: Զառոթը աւարտական հանգըրուակի մրցումներու ծիրին մէջ, Գերմանիոյ հաւաքա-



կանը յաղթեց Սպանիային միակ կողմ, որու հեղինակն էր «Պորուսիա Տորթմունտ»-ի երիտասարդական խումբի անդամ Փարիս Պրուները տուգանային հարուածով, 64-րդ վայրկեանին: Երկրորդ մրցումին, Արժանթինի հաւաքականը յաղթեց Պրագիին «Ռիվըր Փլեյթ»-ի կիսապաշտպան Զլաուտիո Էչեվերիի 28-րդ, 58-րդ եւ 71-րդ վայրկեաններուն նշանակած կոլերով, պաշտպան Կորոսիթոնի, կիսապաշտպան Աքունիայի եւ յարձակող Ռոպերթոյի փոխանցումներով: Երրորդ մրցումին, Ֆրանսայի հաւաքականը վերջ դրաւ Իւզպէքիստանի սփրանքին: Նախկին փուլին, Իւզպէքիստան դուրս ձգած էր Անգլիոյ հաւաքականը: Ֆրանսայի գործը դիւրին չէր եւ ան յաղթեց կիսապաշտպան Պունտայի 83-րդ վայրկեանին նշանակած կոլով: Վերջին մրցումին, Մալիի հաւաքականը կրցաւ յաղթել Մարոքին, յարձակող Տիարրայի 81-րդ վայրկեանին նշանակած կոլով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Սպանիա - Գերմանիա 0-1
- Պրագի - Արժանթին 0-3
- Ֆրանսա - Իւզպէքիստան 1-0
- Մալի - Մարոք 1-0

Կիսաւարտական հանգրուանին պիտի մրցին հետեւեալ խումբերը.

- Արժանթին - Գերմանիա
- Ֆրանսա - Մալի

ԱՆԳՆԻՅԱՆ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 13-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
ՍԻԹԻ ՀԱՄԱՍԱՐԵՑԱԿ
ԼԻՎԵՐՓՈՒԼԻ ՀԵՏ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 13-րդ հանգրուանի ամենահետաքրքրական մրցումն էր «Մանչեսթըր Սիթի» - «Լիվըրփուլ» մրցումը: Առաջատար «Մանչեսթըր Սիթի»-ն իր դաշտին վրայ մրցեցաւ 2-րդ դիրքը գրաւող «Լիվըրփուլ»-ի դէմ: Հաւասարակշռուած մրցումի 27-րդ վայրկեանին, Նորվիչիացի յարձակող Էրիկին Հաւալանտ նշանակեց «Սիթի»-ի կողմ, հոլանտացի պաշտպան Աքի փոխանցումով: Սակայն, 80-րդ վայրկեանին, պաշտպան Ալեքսանտր-Անտուան հաշիւը դարձուց 1-1, եզրակացի յարձակող Մոհամմատ Սալահի փոխանցումէն օգտուելով: Մրցումը աւարտեցաւ հաւասարութեամբ: Այս առիթէն օգտուեցաւ 3-րդ դիրքը գրաւող Լոնտոնի «Արսենալ»-ը իր դաշտէն դուրս յաղթեց 11-րդ դիրքը գրաւող «Պրենթըր»-ին ու գրաւեց առաջատարի դիրքը: Փոխարինող գերմանացի կիսապաշտպան Հաւլերց 89-րդ վայրկեանին նշանակեց մրցումին միակ կոլը, յարձակող Սաքայի փոխանցումով: Իսկ 7-րդ դիրքը գրաւող «Նիւքեմսըր Եուսայթըրտ» իր դաշտին վրայ յաղթեց վերջերս լաւ արդիւնքներ արձանագրող, 10-րդ դիրքը գրաւող «Չելսի»-ին: Շուտացի յարձակող Իզաք 13-րդ, պաշտպան Լասել 60-րդ, պրագիցի կիսապաշտպան Շուելիսըն 61-րդ եւ յարձակող Կորտըն 83-րդ վայրկեաններուն նշանակեցին «Նիւքեմսըր»-ի կոլերը, կիսապաշտպան Մայլիի, կորտընի եւ փարակուեցի կիսապաշտպան Ալփրոնի փոխանցումներով: 23-րդ վայրկեանին, Սթըրլինկ նշանակեց «Չելսի»-ի կոլը, իսկ 73-րդ վայրկեանին, «Չելսի»-ի պաշտպան Ճեյմզ ստացաւ իր երկրորդ դեղին քարտը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Մանչեսթըր Սիթի - Լիվըրփուլ 1-1
- Նիւքեմսըր Եուս. - Չելսի 4-1
- Պրենթըրտ - Արսենալ 0-1
- Պրենթըրտ - Ռեքս 3էմ Եուս. 1-2
- Նորթհոլմսթըր Գորեսթ - Պրայթըն Էստ Հոլ Լլա. 2-3

ՍՊԱՆԻՅԱՆ ԶՈՓԱ ՏԵԼ ՌԵՅԻ 1/32-ՐԴ ՄԱՐՏԱԿԱՆ
ՎԻՅԱՐԵԱԼ ՅԱՂԹԵՑ

Սպանիոյ ֆուտբոլի բաժակի Զոփա Տել Ռեյի վերջին 64 խումբերու հանգրուանի մրցումներուն արձանագրուած է հետեւեալ արդիւնքը.

- Չամորա (Դ.) - Վիյարեալ (Ա.) 1-2

ՍՊԱՆԻՅԱՆ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 14-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
ՊԱՐՍԵԼՈՆԱԿ ԿԵՏ ԿՈՐՍՆՅՈՒՅ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 14-րդ հանգրուանի ամենահետաքրքրական մրցումին, 3-րդ դիրքը գրաւող «Պարսելոնա»-ն իր դաշտէն դուրս մատրիտի մէջ մրցեցաւ 10-րդ դիրքը գրաւող «Ռայո Վալեքանո»-ի դէմ ու մըրցումը աւարտեցաւ հաւասարութեամբ: Մրցումի 39-րդ վայրկեանին, կիսապաշտպան Ռուայ Լոփեզ նշանակեց «Ռայո Վալեքանո»-ի կոլը: Սակայն, 82-րդ վայրկեանին, «Ռայո Վալեքանո»-ի ֆրանսացի պաշտպան Լըթէօն

չկրցաւ զսպել յարձակում մը ու սխալմամբ նշանակեց իր բերդին մէջ: Չորրորդ դիրքը գրաւող «Աթլետիքո Մատրիտ» իր դաշտին վրայ ընդունեց 17-րդ դիրքը գրաւող «Մայորըքա»-ն, յաղթանակ տարաւ ու գրաւեց 3-րդ դիրքը, կէտերով հաւասարելով «Պարսելոնա»-ի հետ: Մրցումին միակ կոլը նշանակեց ֆրանսացի յարձակող Կրիզման 64-րդ վայրկեանին, պաշտպան Հերմոզոյի փոխանցումէն օգտուելով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ալաւլէ - Կրանաստա 3-1
- Ռայո Վալեքանո - Պարսելոնա 1-1
- Վալենսիա - Սելթա Վիլո 0-0
- Աթլետիքո Մատրիտ - Մայորըքա 1-0

ԻՏԱԼԻՅԱՆ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 13-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
ՆԱՓՈԼԻ ԵՒ ԱՍ ՄԻԼԱՆ
ՅԱՂԹԵՑԻՆ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 13-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, 3-րդ դիրքը գրաւող «ԱՍ Միլան» իր դաշտին վրայ մրցեցաւ 6-րդ դիրքը գրաւող «Ֆիորենթինա»-ի դէմ: Մրցումին միակ կոլը նշանակեց ֆրանսացի պաշտպան Հերնանտեզ տուգանային հարուածով, 45+2-րդ վայրկեանին, օգտուելով պաշտպան Փարիզիի սխալէն: Իսկ 4-րդ դիրքը գրաւող «Նափոլի»-ն ամրապնդեց իր դիրքը իր դաշտէն դուրս յաղթելէ ետք 5-րդ դիրքը գրաւող Պերկամոյի «Աթալանթա»-ին: Մրցումի 44-րդ վայրկեանին, վրացի յարձակող Զվարացիւելիա յառաջ տարաւ «Նափոլի»-ն, պաշտպան Տի Լորենզոյի փոխանցումով: 53-րդ վայրկեանին, Նիկերիացի յարձակող Լուքմէն հաշիւը դարձուց 1-1, փոխարինող հոլանտացի պաշտպան Հաթեպտըրի փոխանցումով: Սակայն, 79-րդ վայրկեանին, փոխարինող հիւսիսային մակեդոնացի կիսապաշտպան Էլմաս հաշիւը դարձուց 1-2, փոխարինող Նիկերիացի յարձակող Օսիմիէի փոխանցումով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Սալերնիթանա - Լացիո Ռոմա 2-1
- Աթալանթա - Նափոլի 1-2
- ԱՍ Միլան - Ֆիորենթինա 1-0

ԳԵՐՄԱՆԻՅԱՆ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 12-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
ՊԱՅԵՐ, ՊԱՅԸՐՆ ԵՒ
ՊՈՐՈՒՄԻԱ ՅԱՂԹԱԿԱՆ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 12-րդ հանգրուանին, Հայաստանի հաւաքականի յարձակող Սարգիս Ադամեանի մաս կազմած 17-րդ դիրքը գրաւող «ՖՍ Բէօլն»-ը իր դաշտին վրայ մրցեցաւ 2-րդ դիրքը գրաւող «Պայըրն Միւնխի»-ի դէմ ու կրեց իր 8-րդ պարտութիւնը: Մրցումին միակ կոլը նշանակեց անգլիացի յարձակող Հերի Բլէյն, 20-րդ վայրկեանին: Ադամեան բացակայեցաւ այս մրցումէն: Հայաստանի հաւաքականի յարձակող Հրանդ Ռանոսի մաս կազմած 9-րդ դիրքը գրաւող «Պորուսիա Մետշնընկլատպախը» իր դաշտէն դուրս մրցեցաւ 5-րդ դիրքը գրաւող «Պորուսիա Տորթմունտ»-ի դէմ: Մրցումին սկիզբը, կիսապաշտպան Ռեյց 13-րդ եւ ֆրանսացի կիսապաշտպան Զոնե 28-րդ վայրկեաններուն յառաջ տարին «Մետշնընկլատպախ»-ը: Սակայն, աստիիացի կիսապաշտպան Սապիցըր 30-րդ, յարձակող Ֆուլքրիկ 32-րդ, անգլիացի յարձակող Պայնո-Կիթընզ 45-րդ եւ փոխարինող հոլանտացի յարձակող Մալըն 90+7-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 4-2 եւ «Պորուսիա Տորթմունտ» յաղթանակ տարաւ: Ռանոս բացակայեցաւ «Մետշնընկլատպախ»-ի կազմէն: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- ՖՍ Բէօլն - Պայըրն Միւնխի 0-1
- Պորուսիա Տորթմունտ - Պոր. Մետշնընկլատպախ 4-2
- Այնթրախթ Ֆրանկ - Շթուքկարթ 1-2
- Վերտոյ Պրեմըն - Պայեր Լեվերքուզըն 0-3
- Վոլֆսպուրկ - ՌՊ Լայփցիկ 2-1
- Իւնիոն Պերլին - Աուսպուրկ 1-1

Դասաւորում. 1) Պայեր Լեվերքուզըն 34 կէտ 37-10, 2) Պայեր Լեվերքուզըն 32 կէտ 43-9, 3) Շթուքկարթ 27 կէտ 31-15, 4) Պորուսիա Տորթմունտ 24 կէտ 25-19, 11) Պորուսիա Մետշնընկլատպախ 13 կէտ 25-27, 18) ՖՍ Բէօլն 6 կէտ 9-24

ՓՈՐՊՈՒԿԱԼԻ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ՄԱՐՏԱԿԱՆ
ՓՈՐՔՕ, ՊՐԱԿԱ ԵՒ ՊԵՆՖԻԷԱ
ՅԱՂԹԵՑԻՆ

Փորթուգալի ֆուտբոլի բաժակի վերջին 32 խումբերու հանգրուանի մրցումներուն արձանագրուած են հետեւեալ արդիւնքները.

- Փորթո (Ա.) - Մոնթալեյրե (Դ.) 4-0
- Փորթիմոնէնսէ (Ա.) - Սփորթինկ Պրակա (Ա.) 1-4
- Պենֆիլթա (Ա.) - Ֆամալիսաօ (Ա.) 2-0

ԱՅՍՕՐՈՒՄՆԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ
ՅԱՅՏԱԳԻՐ

ԱՍԻՅՆ ԶԵՄՓԻՆԸ ԼԻԿԻ ԽՄԲ. 5-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

- 16:00 Շարժա (1) - Ալ Սատ (3)
- 16:00 Նասաֆ Զարշի (2) - Ալ Ֆայսալի (4)
- 18:00 ԱԿՍԷ Ալմալիթ (4) - Ալ Իթթիհատ (1)
- 18:00 Ալ Տուհայլ (4) ՎՆ Իթթիթլոլ Տուշանայէ (3)
- 20:00 Սպահան (2) - Ալ Զոուա Ալ Ճաուիյա (3)
- 20:00 Ալ Նար (1) - Փերսեփոլիս (2)
- ԱՍԻՅՆ ՖԵՏԵՐԱՍԻՆԻ ԲԱԺԱԿԻ ԽՄԲ. 5-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
- 14:00 Պաշտիստիարա Զինկ (1) - Մազիյա (4)
- 16:00 Սոհուն Պական (2) - Օտիշա (3)
- 18:00 Ալ Ֆուրուա (3) - Ճապալ Մուքապպեր (2)
- 19:00 Ալ Նահտա (1) - Ալ Ահլտ (4)
- 20:00 Ալ Արապի (3) - Ալ Չաուրա (2)
- 20:00 Ալ Ռիֆա (1) - Ալ Նըքմէ (4)

ԱՆԳՆԻՅԱՆ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 13-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

22:00 Ֆուլքեմ (15) - Կուլլըր. Ունտըրըր (12)

ՍՊԱՆԻՅԱՆ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 14-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

22:00 Ժիրոնա (1) - Աթլետիք Պիլայաօ (5)

ԻՏԱԼԻՅԱՆ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 13-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

19:30 Վերոնա (19) - Լեչչէ (14)

21:45 Պոլոնիա (8) - Թորինո (11)

ՇՈՒԵՏԻ Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ ՓԼԵՅ-ՕՅԻ ԴԱՐՁ

20:00 Պրոմմափոյքարնա - Ութսիքթէն Կեթըրպորկ

ՊՐԱՍԻԼԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 35-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

02:00 Կոյաս (18) - Զրուգէյրո (17)

ԱՐԺԱՆԹԻՆԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ Բ. ՓՈՒԼԻ

14-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

00:00 Եսթիստիանթա (7) - Լանուս (14)

00:00 Սան Լորենցօ (10) - Սանթրալ Զորտոպա (4)

02:30 Ռասինկ Զլապ (3) - Պելկրանօ (2)

02:30 Նիլզ Օլտ Պոյզ (8) - Տեֆէնսա Ի Փիլսթիսա (11)

ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ԷՆ. ՊԻ.ԷՅ. Ի ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԻՆ

02:00 Ֆիլատելֆիա 76րդ (4) - ԼԱ Լէյքըրդ (9)

05:30 ԼԱ Զլիփըրդ (11) - Տենվըր Նակեց (5)

ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ

6-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

19:00 Ն.Ս.Ա. Անթիլիաս (10) - Զըքմէ (1)

ՃԱՏՐԱԿ
ԱՇԽԱՐՀԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԻՆ
ՓԻԼԻՊՈՍԱՆ ԵՒ ԱՐԱՍԱՐԿ՝
10-ՐԴ

Աշխարհի երիտասարդական ճատրակի անհատական ախոյեանութեան մրցումներուն, 11 հանգրուան ետք Հայաստանի երիտասարդները արձանագրեցին հետեւեալ արդիւնքները.

Մինչեւ 18 տարեկան տղոց դասաւորում. 1) Ա. Կրեյնել-Ռուս. 9.5 կէտ / յաւելեալ ցուցանիշ. 74, 2) Վ. Մուրզիկ-Ռուս. 9 կէտ / 74, 3) Ա. Անսաթ-Ղազ. 8.5 կէտ / 74.5, 24) Է.մին Օհանեան-Հայ. 6.5 կէտ / 71

Մինչեւ 16 տարեկան տղոց դասաւորում. 1) Ե. Սիման-Լեհ. 9.5 կէտ / յաւելեալ ցուցանիշ. 73.5, 2) Ե. Զիմըրդսի-Լեհ. 9 կէտ / 76.5, 3) Լ. Զոսթա - Գեր. 9 կէտ / 72.5, 10) Ռոպերթ Փիլիպոսեան-Հայ. 7.5 կէտ / 71, 13) Էրիք Գասպարեան-Հայ. 7 կէտ / 72.5

Մինչեւ 14 տարեկան տղոց դասաւորում. 1) Փ. Սովինսքի-Լեհ. 9 կէտ / յաւելեալ ցուցանիշ. 71.5, 2) Մ. Էրմիչ-Գեր. 8.5 կէտ / 77.5, 3) Ն. Փերոսա-Իտ. 8.5 կէտ / 67, 10) Փենիկ Ադասարով-Հայ. 8 կէտ / 64

Մինչեւ 18 տարեկան աղջիկներու դասաւորում. 1) Ա. Ալլահվերտիեա-Ատր. 9.5 կէտ / յաւելեալ ցուցանիշ. 72.5, 2) Ռ. Վու-ԱՄՆ 9 կէտ / 72.5, 3) Ե. Հրեյնիչի-Ռուս. 8.5 կէտ / 70.5, 25) Աստղիկ Յակոբեան-Հայ. 6.5 կէտ / 58

Մինչեւ 16 տարեկան աղջիկներու դասաւորում. 1) Չ. Ուանկ-Չին. 10 կէտ / յաւելեալ ցուցանիշ. 73.5, 2) Ա. Շվետովա-Ռուս. 9 կէտ / 73, 3) Ա. Նուրմանովա-Ղազ. 8 կէտ / 71.5, 49) Նուարդ Հայրապետեան-Հայ. 5.5 կէտ / 64.5

Մինչեւ 14 տարեկան աղջիկներու դասաւորում. 1) Ա. Խամտամովա-Իւզպ. 10 կէտ / յաւելեալ ցուցանիշ. 68, 2) Ե. Զալիախմէթ-Ղազ. 9 կէտ / 73.5, 3) Ի. Մու-ԱՄՆ 8.5 կէտ / 72, 24) Անի Աւետիսեան-Հայ. 7 կէտ / 59.5

ՊԱՍԵԹՊՈՒԼ
ԵՆՈՒՐՈՒԿԻ 10-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ
ՊԱՐՍԵԼՈՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴ
ՊԱՐՏՈՒԹԻՆԸ

Երկրայի պասքէթբոլի ակումբներու առաջնակարգ մրցաշարի՝ Եուրոլիկի ախոյեանութեան 10-րդ հանգրուանի մրցումներուն արձանագրուած են հետեւեալ արդիւնքները.



- Մաքապի ԹԱ (Իսր.) - Պարսելոնա (Սպ.) 90-92
- Վիրթիս Պոլոնիա (Իտ.) - Ֆեներպահչէ (Թըր.) 87-79
- Ռեալ Մատրիտ (Սպ.) - Ալպա Պերլին (Գեր.) 99-75
- Օլիմփիաքոս Փիրեոս (Յուն.) - Ճալկիրիս Զաուսա (Լիթ.) 89-72

Դասաւորում. 1) Ռեալ Մատրիտ 9 յաղթ - 0 պարտ / կէտերու տարբ. +128, 2) Պարսելոնա 8-2 / +69, 3) Վիրթիս Պոլոնիա 7-3 / +28, 4) Փանաթինայքոս 6-4 / +46, 5) Օլիմփիաքոս 6-4 / +21, 6) ԱՍ Մոնաքօ 6-4 / +9, 7) Մաքապի ԹԱ 5-4 / -13, 8) Պասքոնիա Վիրթիս 5-5 / -6

www.araraddaily.com

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradorartert@gmail.com
ارارات جريدة سياسية يومية أرمنية | المجلة المسبقة: أني صرافيان
(تصدر عن شركة مطبوعات الميثاق والفرع (ش.م.م.)